ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.09.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/73

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի համայնքապետարան
Բողոք բերող՝ «Ռոստորգ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
Գեղաշենի համայնքապետարանի ներկայացուցիչներ՝ Ա. Սիմոնյանի, Ն. Թադևոսյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀԿՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/06» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, ֆոտովոլտային կայանքների տեղադրման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Ռոստորգ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 06.09.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի համայնքապետարանի կարիքների համար ֆոտովոլտային կայանքների տեղադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀԿՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/06» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում՝ «ՀՀԿՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/06» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Բողոքներ քննող անձին (Գ. Ներսիսյանին) բողոքը մակագրվել է 28.08.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի (Գ. Ներսիսյանի) 03.09.2021թ.-ի թիվ /ԲՔԱ-ԳՆ/1/14253-2021 գրությամբ բողոքը վերադարձվել է բողոքում արձանագրված թերությունը վերացնելու համար:

Ընկերությունը 06.09.2021թ.-ին ներկայացրել է բողոքի շտկված տարբերակը, որը նույն օրը մակագրվել է Բողոքներ քննող անձին:

07.09.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/73 համարի ծածկագիրը:

16.09.2021թ.-ին և 24.09.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 16.09.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 24.09.2021թ.-ին:

2. «Ռոստորգ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Ռոստորգ» ՍՊԸ-ն 06.09.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի համայնքապետարանի կողմից 16 օգոստոս 2021թ հայտարարված «ՀՀԿՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/06» ծածկագրով մրցույթի հրավերի հավելված 3-ում՝ վճարման ժամանակցույցից պարզ է դառնում, որ «Գեղաշեն համայնքում ֆոտովոլտային կայանքների տեղադրման աշխատանքների» կատարման ընդհանուր գումարի 50 տոկոսը տրամադրում է համայնքապետարանը, իսկ մյուս 50 տոկոսը առկա չէ բյուջեում և տրամադրվում է ՀՀ Կառավարության կողմից սուբվենցիոն ծրագրով: Վերը նշված հավելվածում նշված է նաև, որ Կառավարության մասնաբաժինը վճարվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված:

Ըստ Գնումների մասին օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը, սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում:

Այս համադրություններից հետևում է, որ «ՀՀԿՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/06 ծածկագրով գնման գործընթացը իրականացվում է ՀՀ գնումների մասին օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա:

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ մասը, այն է եթե ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, տեղի է ունենալու բանակցություններ:

Հիմք ընդունելով Գեղաշենի համայնքապետարանի կողմից հայտարարված ՀՀԿՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/06 ծածկագրով գնահատող հանձնաժողովի 23 օգոստոս 2021 թվականի նիստի արձանագրությունը (որը հրապարակվել է 25 օգոստոսի 2021թ. խախտվել է ՀՀ գնումների մասին օրենքի 34-րդ հոդվածի 9-րդ կետը, այն է՝ Հայտերի գնահատման նիստին ավարտին հաջորդող աշխատանքային օրը նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում), որում էկովիլ ՍՊԸ-ն հայտարարվում է հաղթող մասնակից:

Հաշվի առնելով վերոգրյալները, այն է՝

Գների նվազեցման բանակցություններ չի վարվել,

Արձանագրությունը ժամկետում չի հրապարակվել:»:

Ելնելով վերոգրյալներից՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի համայնքապետարանի կարիքների համար ֆոտովոլտային կայանքների տեղադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀԿՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/06» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում՝ «ՀՀԿՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/06» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

3. <u>ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 07.09.2021թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/14433-2021 գրությամբ դիմել է ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի համայնքապետարանին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Ռոստորգ» ՍՊԸ-ի կողմից 06.09.2021թ.-ի ներկայացված բողոքի

վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 14.09.2021թ.-ին ներկայացված գրությամբ ներկայացրել է «ՀՀԿՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/06» ծածկագրով գնման ընթացակարգի բոլոր փաստաթղթերը՝ այդ թվում նաև կնքված պայմանագիրը:

4. <u>ԳԲՔԱ-LO-2021/73 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի համայնքապետարանի կողմից ֆոտովոլտային կայանքների տեղադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով 16.08.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀԿՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/06» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հրավերի թիվ 6 հավելվածով սահմանված պայմանագրի նախագծի անբաժանելի մաս կազմող թիվ 3 հավելվածով՝ վճարման ժամանակացույցով սահմանվել է, որ աշխատանքները կատարվելու են սուբվենցիոն ծրագրի շրջանակներում, համաձայն որի պայմանագրային գնի 50 տոկոսը վճարելու է համայնքը, մյուս 50 տոկոսը՝ կառավարության համապատասխան որոշման հիման վրա ֆինանսավորվելու է պետական բյուջեից: Քանի որ նախապես հնարավոր չէ կանխատեսել Կառավարության որոշման ժամկետ, ուստի գումարի 2-րդ մասնաբաժինը նախատեսվում է վճարել մինչև բյուջետային տարվա ավարտը:

iii. ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի համայնքապետարանի 2021 թվականի գնումների փոփոխված պլանը հրապարակվել է www.gnumner.am կայքում 13.08.2021թ.-ին:

iv. www.gnumner.am կայքում մինչև 16.08.2021թ.-ը առկա տվյալների համաձայն՝ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի համայնքապետարանի կողմից հրապարակված 2021 թվականի գնումների պլանի փոփոխության մեջ առկա է «ՀՀԿՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/06» ծածկագրով հայտարարված գնանշման հարցման ընթացակարգով ձեռքբերվելիք գնման առարկան՝ համապատասխանաբար սահմանված ԳՄԱ դասակարգման (CPV) կոդով (45311146)՝ ֆոտովոլտային կայանների տեղադրման աշխատանքներ, 22 402 835 ՀՀ դրամ նախահաշվային գնով:

v. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել նաև «Ռոստորգ» ՍՊ և «Էկովիլ» ՍՊ ընկերությունները, որոնք համապատասխանաբար ներկայացրել են 22 352 239 ՀՀ դրամի և 17 625 000 ՀՀ դրամի գնային առաջարկներ:

vi. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 23.08.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել «Էկովիլ» ՍՊԸ-ին, որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, ճանաչել ընտրված մասնակից:

vii. 25.08.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակվել է «ՀՀԿՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/06» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը (այսուհետ նաև՝ Հայտարարություն):

viii. Հայտարարությամբ անգործության ժամկետ է սահմանվել հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

ix. ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի համայնքապետարանի և «Էկովիլ» ՍՊԸ-ի միջև 30.08.2021թ.-ին կնքվել է թիվ «ՀՀԿՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/06» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

x. Պատվիրատուի կողմից 31.08.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակվել է «ՀՀԿՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/06» ծածկագրով կնքված պայմանագրի մասին հայտարարություն:

5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Ռոստորգ» ՍՊԸ-ի կողմից 06.09.2021թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 46-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը ներկայացվում է սույն օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

Նույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Նույն հոդվածի 9-րդ և 11-րդ մասերի համաձայն՝ ... բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին գնումների հետ կապված բողոքներ քննող անձը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում կայացնելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում որոշումը հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը:

ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ.-ի թիվ 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» կարգի (այսուհետ նաև՝ Հրաման) 9-րդ կետի համաձայն՝ բողոքը վարույթ ընդունելու օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում Անձը բողոքը և դրա վերաբերյալ հայտարարությունը, հրապարակում է տեղեկագրում:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պայմանագիր կնքելու մասին որոշումը: Նման պարագայում բողոքը ներկայացվում է օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում: Բողոքներ քննող անձը բողոքը

ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին հայտարարություն է հրապարակում տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, որի արդյունքում հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման ուժի մեջ մտնելու օրը գնման գործընթացը ինքնաբերաբար կասեցվում է:

Այսինքն՝ գնման գործընթացը կասեցվում է օրենքի ուժով, այն է՝ ներկայացված բողոքը վարույթ ընդունելու մասին նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից և շարունակում է ընթացակարգը կասեցված մնալ մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը:

Ընդ որում, Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» և «բ» ենթակետերով սահմանված է Բողոքներ քննող անձի իրավասությունների շրջանակը, որից և ելնելով Բողոքներ քննող անձը քննում է ներկայացված բողոքն ու կայացնում է որոշումներ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի համայնքապետարանի կողմից ֆոտովոլտային կայանքների տեղադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով 16.08.2021թ.-ին հայտարարված «ՀՀԿՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/06» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի թիվ 6 հավելվածով սահմանված պայմանագրի նախագծի անբաժանելի մաս կազմող թիվ 3 հավելվածով՝ վճարման ժամանակացույցով սահմանվել է, որ աշխատանքները կատարվելու են սուբվենցիոն ծրագրի շրջանակներում, համաձայն որի պայմանագրային գնի 50 տոկոսը վճարելու է համայնքը, մյուս 50 տոկոսը՝ կառավարության համապատասխան որոշման հիման վրա ֆինանսավորվելու է պետական բյուջեից: Քանի որ նախապես հնարավոր չէ կանխատեսել Կառավարության որոշման ժամկետ, ուստի գումարի 2-րդ մասնաբաժինը նախատեսվում է վճարել մինչև բյուջետային տարվա ավարտը: ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի համայնքապետարանի 2021 թվականի գնումների փոփոխված պլանը հրապարակվել է www.gnumner.am կայքում 13.08.2021թ.-ին: www.gnumner.am կայքում մինչև 16.08.2021թ.-ը առկա տվյալների համաձայն՝ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի համայնքապետարանի կողմից հրապարակված 2021 թվականի գնումների պլանի փոփոխության մեջ առկա է «ՀՀԿՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/06» ծածկագրով հայտարարված գնանշման հարցման ընթացակարգով ձեռքբերվելիք գնման առարկան՝ համապատասխանաբար սահմանված ԳՄԱ դասակարգման (CPV) կոդով (45311146)՝ ֆոտովոլտային կայանների տեղադրման աշխատանքներ, 22 402 835 ՀՀ դրամ նախահաշվային գնով: Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Ռոստորգ» ՍՊ և «Էկովիլ» ՍՊ ընկերությունները համապատասխանաբար ներկայացրել են 22 352 239 ՀՀ դրամի և 17 625 000 ՀՀ դրամի

գնային առաջարկներ, ինչով պայմանավորված Հանձնաժողովի 23.08.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ որոշում է կայացվել «Էկովիլ» ՍՊԸ-ին, որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, ճանաչել ընտրված մասնակից, ինչի արդյունքում 25.08.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակվել է «ՀՀԿՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/06» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և անգործության ժամկետ է սահմանվել հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը: ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի համայնքապետարանի և «Էկովիլ» ՍՊԸ-ի միջև 30.08.2021թ.-ին կնքվել է թիվ «ՀՀԿՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/06» ծածկագրով պետական գնման պայմանագիր, իսկ Պատվիրատուի կողմից 31.08.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակվել է «ՀՀԿՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/06» ծածկագրով կնքված պայմանագրի մասին հայտարարություն:

Ելնելով վերոգրյալ իրավական ու փաստական հանգամանքերից, դրանց համադրման արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ սույն դեպքում՝ գնման ընթացակարգի շրջանակներում կնքված պայմանագրի առկայության պայմաններում, սույն բողոքի քննությունը դառնում է առարկայազուրկ, այն փաստի հաշվառմամբ, որ խախտումներ արձանագրելու դեպքում, այն չի կարող հանգեցնել կնքված պայմանագրի անվավեր ճանաչման մասին որոշում կայացնելուն՝ հիմք ընդունելով Օրենքի Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով ամրագրված Բողոքներ քննող անձին վերապահված լիազորությունների ու իրավասությունների սահմանները:

Միաժամանակ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել հետևյալը.

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 33-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագրով (նախագծով) սահմանվում է նաև, որ այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում,

պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է: Սույն կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում հսկողություն և (կամ) վերահսկողություն իրականացնող մարմինները, իսկ մյուս դեպքերում պատվիրատուն այդ մասին ծանուցում են իրավապահ մարմիններին՝ վերջիններիս և պայմանագիր կնքած մասնակցին ներկայացնելով հիմքերը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի համայնքապետարանի կարիքների համար ֆոտովոլտային կայանքների տեղադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀԿՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/06» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում՝ «ՀՀԿՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/06» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Ռոստորգ» ՍՊ և «Էկովիլ» ՍՊ ընկերությունները, որոնք համապատասխանաբար ներկայացրել են 22 352 239 ՀՀ դրամի և 17 625 000 ՀՀ դրամի գնային առաջարկներ:

Հանձնաժողովի 23.08.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն «Էկովիլ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

Վերոգրյալ իրավական նորմի լույսի ներքո, ուսումնասիրելով գործում առկա՝ վերը թվարկված փաստերը, ինչպես նաև www.gnumner.am կայքում մինչև 16.08.2021թ.-ը առկա ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի համայնքապետարանի կողմից հրապարակված 2021 թվականի գնումների պլանի փոփոխությունը, Հրավերը և Հանձնաժողովի 23.08.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրությունը՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ տվյալ դեպքում առկա չեն այնպիսի հանգամանքներ, փաստական տվյալներ, որոնց հաշվառմամբ արձանագրվեր «ՀՀԿՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/06 ծածկագրով գնման ընթացակարգը գնումների մասի ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին խախտմամբ կազմակերպված լինելու փաստը, կամ այն, որ «Էկովիլ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին Հանձնաժողովի կողմից կայացված որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, որպիսի պայմաններում՝ վերջինիս հետ կնքված պայմանագրի ոչ իրավաչափ լինելը:

Ավելին, ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի համայնքապետարանի կողմից ֆոտովոլտային կայանքների տեղադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով

16.08.2021թ.-ին հայտարարված «ՀՀԿՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/06» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չհայտարարելով Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, Հանձնաժողովը գործել է իրավաչափ, քանի որ գնման առարկա հանդիսացող աշխատանքների համար 13.08.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված գնումների պլանով (փոփոխություններով) նախատեսված ԳՄԱ դասակարգման (CPV) միջանցիկ ծածկագրով՝ 45311146, նախատեսված է 22 402 835 ՀՀ դրամ գումարի չափով ֆինանսական միջոցներ, որպիսի պայմաններում գնման ընթացակարգը չէր կարող հայտարարվել Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, քանի որ սույն դեպքում, պատվիրատուն նախապես կանխատեսել է (հաշվարկել է) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Ռոստորգ» ՍՊԸ-ի կողմից բողոքով ներկայացված պահանջը, կնքված պայմանագրի առկայության պայմանենրում, դառնում է առարկայազուրկ, ուստի և մերժման ենթակա:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ռոստորգ» ՍՊԸ-ի կողմից 06.09.2021թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/73 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**